բոլոր Կամենիցի Հայկազունք և այլ ազգեր։ Մի-քայէլ վարդապետ սրտաշարժ քարոզ մի խօսեցաւ հաւատացելոց, որոյ աւարտման միջոց պարկեշտու-թեամբ մատեցան բեմին զոյգ մի, որոնք արդէն իրենց առաքինութեամբ բազմութեան համակրու-թիւնը գրաւած էին. Միքայէլ վարդապետ՝ աւե-տարանին խօսքերով պսակեց և անլուծանելի կա-պով կապեց զնոսա. համբրէն ժողովուրդք Հայք և օտարք լիասիրտ մաղթեցին նոր պսակելոց՝ երջան-կութիւն և բազդ և շատ երկայն արև։ Փեսայն մեզ ծանօթ Ակոբոյ հայ պատանին էր, որ կ'առնուր Խոցիմիրաքիի միակ դուստրը Մարգարիտէ։ Հարս-նեստունն եղաւ Հայոց դատարանն, զոր հայճեպով պատրաստեցին, փոխանակ աթոռներու՝ երկայն երկայն նստարանները կապերտներով և գորգերով յարդարելով. շատ էին հարսնևորքն, ամենեցուն երեսին վրայ գոհութեան զուարթութիւն. շատ մաղթողական բաժակներ պարպուեցան յերջան-կութիւն հայ պսակելոց. դողդոջուն ձայներով հայ պառաւներ, յորդորաբար հայերէն օրհնութիւններ կը հեղուին պսակելոց գլխին. « Երկայն արև լինին, ծլին ծաղկին. իրենց թոռներուն պսակները պաշ-նեն »։ Եւ յիրաւի, հասած է նոցա լիաբերան օրհնութիւնն. զի Ակոբոյ կամ Ակոբսովիչ ցեղը՝ բազմածնունդ և երկար անուանի եղած է Լեհա-հայոց մէջ։

Պսակելոց արձանագրութեան մէջ, յետ գաղ-թականաց դարձին, առաջին տեղ կը բռնէ Ակոբ-սոյի պսակման արձանագրութիւն։ Խոցիմիրաքեայ տնկած կակղիք՝ առիթ եղան ինձ ուշադրութիւն դարձընելու այս դէպքիս, որոնք անբարբառ վկայք երկու հարիւր տարի է որ կանգնած իրենց տեղը՝